

619.2

3-11

03 SEP 2013

1 AUG 2013

619.2  
Հ-11

44

619.2  
Հ-11  
պ.

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՎԱՐԻ ԺԱՆՏԱԽՏԻ ԴԵՄ ՊԱՅԲԱՐԻ ՀԱՄԱՐ ԶԵՌՔ ԱՌՆՎԵԼԻՔ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Սույն կանոնադրության գործնեյությունը տարածվում է տավարի, հորթերի և գոմեշների տերերի վրա, ումն ել վոր այդ անասունները պատկանելու լինեն՝ պետական կամ հասարակական հիմնարկություններին ու ձեռնարկություններին, զինվորական մասերին, մասնավոր անասնատերերին, նաև իրենց անասունները ժամանակավորապես Հայաստանի սահմանները քշող հարևան հանրապետությունների քաղաքացիներին:

2. Սույն կանոնադրությամբ նախատեսված միջոցները գործադրվում են անկախ անասունների տերերի կամ նրանց փոխարինողների համաձայնությամբ:

3. Այդ միջոցների գործադրման անմիջական ղեկավարությունն ու նրանց կատարման հսկողությունը գավառի սահմաններում, պատկանում է գավառականարուժին, իսկ չբնակեցված, դրա համար հատուկ լիազորված շրջանականարուժին:

Այդ նպատակով գավառականարուժին մասնակցում է տավարի ժանտախտի դեմ պայքարի միջոցների մասին Գավառի Գավառիկոմի հրատարակելիք պարտադիր վորոշումների նախադժերի քննությանը, ղեկավարում է անասնարուժական պերսոնալի աշխատանքները գավառում՝ հետևում է հակաժանտախտային հանձնաժողովների, նաև վերջինների կողմից վորոշված հակաժանտախտային միջոցների կատարմանը մասնակից արած պաշտոնական անձաց գործնեյությանը, և նրանց կողմից թերացումներ ու անգործություն նկատելու դեպքում, հայտնում է Գավառիկոմին և անհրաժեշտության դեպքում, Հոգժողկոմատի Անասնարուժական Վարչությանը (Անաս. Որենս. Գրքի 76-րդ հոդ.):

4. Հակաժանտախտային միջոցների կիրառման վերադաս հսկողությունն ու ղեկավարությունը Հանրապետության սահմաններում, պատկանում է Հոգժողկոմատի Անասնարուժական Վարչությանը:

11016

ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏՆԵԼՈՒ ԿԱՐԳԵ ՈՒ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

5. Անասնատերերը կամ նրանց փոխարինողները իրենց պատկանած կամ հոգատարութեան տակ գտնված անասունների, հորթերի և գոմեշների վրա կասկածի առիթ տվող վորևե վարակիչ կամ տարափոխիկ հիվանդութիւններին, մանավանդ տավարի ժանտախտի նշաններ հայտնաբերելիս, պարտավոր են այդ մասին անմիջապէս հայտնել գյուղական, քաղաքային (քաղաքներում) իշխանութեան ներկայացուցչին, քոչատեղերի վարիչին (արոտատեղերում), միլիցիայի ներկայացուցչին կամ անասնաբուժա-սանիտարական հոգատարութեան անդամին, իսկ յեթե հնարավոր է միտամանակ և անասնաբուժական հսկողութեան:

Ծանոթութիւն. — Տավարի ժանտախտի կասկածի առիթ տվող նշաններ պետք է համարել հիվանդի կերից հրաժարվելը, աչքերից ու քթածակերից ծորելը, ներքին շրթունքի մակերեսի վրայի պղուկները և, փորլուծութիւնը:

6. Իշխանութեան վերահիշյալ ներկայացուցիչները հիվանդութեան մասին տեղեկութիւն ստանալուն պէս ձեռք են առնում սույն կանոնադրութեան 8-րդ կետում ցույց տրված միջոցները և առանց հապաղելու հայտնում Երջգործկոմին, իսկ վերջինը՝ համապատասխան անասնաբուժին Յեթե չըջանում մատնանշված անասնաբուժը չկա, տեղեկութիւնը շտապ կարգով՝ հեռախոսով կամ սուրհանդակով, տրվում է Գովգործկոմին և և գաղանաանաբուժին:

7. Թե ազատ պրակտիկայով պարապող և թե պետական ու հասարակական այլ հիմնարկութիւններում պաշտոնավարող անասնաբուժներն ու անասնաբուժակները, տավարի ժանտախտով հիվանդ կամ կասկածելի անասուն հայտնաբերելիս, (սպանդանոցներում, շուկաներում, բուժարաններում, առանձին տնտեսութիւններում և այլուր) պարտավոր են անմիջապէս հայտնել չըջանային կամ գաղանաանաբուժին, իսկ մինչև վերջինս գալը, պարտավոր են ձեռք առնել միայն 8-րդ կետում հիշված նախնական միջոցները:

8. Իշխանութեան ներկայացուցիչները հիվանդութեան մասին տեղեկութիւն ստանալիս անասնաբուժա-սանիտարական հոգատարութեան անդամների հետ պարտավոր են, մինչև անասնաբուժի գալը ձեռք առնել հետևյալ միջոցները՝

- ա) Հիվանդ անասուններին դատել առողջներից, բոս հնարախորտի յանձնարարած չենքում կամ առանձին արոտատեղում:
- բ) Թույլ չտալ իբրև մասցու մորթել այդ անասունը:
- գ) Արգելել վարակված բակից դուրս բերել թե հիվանդ և թե առողջ անասուններին, տանել բնդհանուր ջրելատեղ, լուգարանը, բնդհանուր արոտատեղը, ծախել կամ քշել ուրիշ գյուղեր և արոտատեղեր:

դ) Արգելել կողմնակի անձանց այցելել այն շենքերը, վորտեղ հիվանդ անասուններ են գտնվում, բացի անասնատերերից կամ նրանց փոխարինողներից, վորոնց հանձնարարված է անասունների հսկողութիւնն ու խնամքը:

Ծանոթութիւն. — Իշխանութեան ներկայացուցիչը կարող է վարակված բակերը նշանակել սև դերոշակ, կամ մուտքի դռան վրա կպցնել փոքրիկ տախտակ, «ԿԱՐԱՆՏԻՆ» պարզ գրութեամբ:

9. Իշխանութեան ներկայացուցիչները հարկաւոր կարգադրութիւնները հայտնում են անասնատերերին կամ նրանց փոխարինողներին գրավոր կերպով և հետևում են նրանց կատարմանը:

10. Յեթե ցույց տված նշաններով հիվանդութիւնը տարածվել է մի քանի տնտեսութիւններում կամ նախիրներում, գյուղական իշխանութիւնը ամբողջ գյուղը կարանտինի յենթարկելու կարգադրութիւն է անում և այդ մասին հայտնում Երջգործկոմին, վորն այդ գյուղն է գործուղում իր ներկայացուցչին հավաստիանալու, թե այդ միջոցը ինչ չափով է կատարվում գյուղական իշխանութեան ու ազգաբնակչութեան կողմից:

ԺԱՆՏԱԽՏԻ ՎՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԸ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԻ ԿՈՂՄԻՑ

11. Երջանային կամ գաղանաանաբուժը այս կամ այն կերպ տեղեկութիւն ստանալով ժանտախտի մասին, առանց հապաղելու մեկնում է հիվանդութիւն հայտնված վայրը, հիվանդութեան բնույթը պարզելու և միջոցներ ձեռք առնելու նպատակով:

Ծանոթութիւն. — Այն անասնաբուժը, վորը տեղեկութիւն ստանալուց հետո, 24 ժամվա ընթացքում վտանգի վայրը չի մեկնում, անմիջապէս հայտնում է կենտրոնին, բացատրելով իր շղնայու պատճառները:

12. Համապատասխան անասնաբուժը տեղ հասնելուն պէս, իշխանութեան ներկայացուցչի ներկայութեամբ, քննում է հիվանդ անասունին և յեթե ստույգ կա, դիահատման է յենթարկում և վորոշում հիվանդութեան բնույթը:

Յեթե հիվանդութեան նշանները հիմք չեն տալիս ժանտախտի մասին կարական յեղրակացութիւն տալու, ապա անասնաբուժն իրավունք ունի իշխանութեան ներկայացուցչի և յերկու անասնատերերի ներկայութեամբ վերցնել տերերից հիվանդ անասուններից մեկին և գնահատելուց հետո սպանել նրան, հիվանդութեան ճիշտ վորոշումը (դիագնոզ) տալու նպատակով. ընդ վորում, անհրաժեշտութեան դեպքում հրավիրել նաև մոտակա չըջանի անասնաբուժներից մեկին, հիվանդութեան բնույթը միասին վորոշելու համար:

**ՀԱԿԱԺԱՆՏԱԽՏԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՀԱՆՃՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՀԻՄՆԵԼԸ, ՆՐԱՆՑ ԿԱԶՄՆ ՈՒ ԳՈՐԾՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ.**

13. Գյուղում, քաղաքում, արոտատեղերում ժանտախտ լինելը հաստատելուց հետո, անասնաբուժը հայտնում է համապատասխան իշխանություններին, հակաժանտախտային Գործադիր Հանձնաժողովի գումարման մասին, իսկ մինչև Հանձնաժողովի հավաքվելը, ձեռք է առնում որենքով վորոչված անհրաժեշտ հակաժանտախտային միջոցներ:

14. Հանձնաժողովը պետք է հավաքվի անասնաբուժի տված տեղեկությունը ստանալուց հետո, վոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում:

15. Գյուղերում և քոչատեղերում հանձնաժողովի կազմի մեջ մտնում են՝

- 1. Շրջագործկոմի ներկայացուցիչը—նախագահ:
- 2. Շրջանի անասնաբուժը:
- 3. Տեղական ազգաբնակչության ներկայացուցիչը, հանձին ժանտախտով վարակված գյուղի խորհրդի նախագահի: Իսկ քաղաքներում՝
- 1. Քաղգործկոմի ներկայացուցիչը—նախագահ:
- 2. Քաղանասնաբուժը:
- 3. Քաղխորհրդի ներկայացուցիչը:

16. Գավառում ժանտախտի լայն ծավալման դեպքում, Գավառի գործկոմի նախագահը, գալնաանաբուժի առաջադրությամբ, գումարում է Գավառային Հակաժանտախտային Գործադիր Հանձնաժողով, վորի կազմի մեջ մտնում են՝ Գավառի գործկոմի ներկայացուցիչը, գալնաանաբուժը և գավառի լիցիայի ներկայացուցիչը: Հանձնաժողովի գործնկյության շրջանում գինավորական մասեր լինելու դեպքում, նրա (Հանձնաժողովի) կազմի մեջ, իբրև անդամ մտնում է նաև գինավորական մասի ներկայացուցիչը, խորհրդակցական ձայնի իրավունքով:

Հանձնաժողովը կարող է հրավիրել կոնսուլտացիայի համար, վորպես պարտավորյալ անդամներ, խորհրդակցական ձայնի իրավունքով անասնաբուժներին, գյուղատնտեսներին, տեղական սանիտարական հսկողության և անասնաբուժական հոգատարության ներկայացուցիչներին և այլ անձանց, վորոնք իրենց գիտությամբ և ազդեցությամբ կարող են ոգտակար լինել ընդհանուր գործին՝ ինչպես որինակ—տեղական անասնատերերը, անասնաբուժարանների և ֆերմաների կառավարիչները և այլն:

17. Հակաժանտախտային Գործադիր Հանձնաժողովի գործավարությունը տարվում է Հանձնաժողովի անդամ անասնաբուժի ղեկավարությամբ: Հանձնաժողովն իր կատարած աշխատանքների և վորոշումների մասին կազմում է արձանագրություններ, վորոնց պատճենները ներկայացնում է Հողժողովմատի Անասնաբուժական Վարչության, իսկ բնագրերը հանձնաժողովի

անդամների ստորագրություններով, ուղարկում է համապատասխան գավառական անասնաբուժին:

Ծանոթություն.—Հանձնաժողովի անդամ անասնաբուժը ժանտախտի վտանգված վայրերի հաշվետվությունները սահմանված կարգով ու վորոշված ժամկետներին ներկայացնում է համապատասխան Հողբաժնի Անասնաբուժական Յենթաբաժնին և Հողժողովմատի Անասնաբուժական Վարչությանը:

18. Հակաժանտախտային Գործադիր Հանձնաժողովում հարցերը վճռվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Յեթե ժանտախտի դեմ ձեռք առնվելիք միջոցների մասին Հանձնաժողովի անդամ անասնաբուժը մնում է առանձին կարծիքի, ապա հանձնաժողովը կիրառում է անասնաբուժից ուլց տված միջոցները: Վերջինս այդ մասին անհապաղ հայտնում է համապատասխան գավառական անասնաբուժին ի տնորինություն և անհրաժեշտության դեպքում Հողժողովմատի Անասնաբուժական Վարչությանը:

19. Հանձնաժողովի գործողությունները կարող են տարածվել, վոչ միայն մեկ գյուղի, արոտատեղի վրա, այլ և մի խումբ գյուղերի, վորոնք տնտեսապես սերտ կերպով կապված են իրար հետ:

20. Հակաժանտախտային Գործադիր Հանձնաժողովը իր աշխատանքներն սկսելիս նախ և առաջ՝

ա) Անասնաբուժական ըննության է յենթարկում վտանգված գյուղը, արոտատեղը, քաղաքում թաղամասը, պարզում է հիվանդ և հիվանդության կողմից կասկածելի (40 Յելս. և բարձր աստիճան տաքությամբ) անասունների քանակը, վարակված բակերի, հիվանդացածների, առողջացածների և սատկածների թիվը, հիվանդության յերևալու սկզբից, մինչև անասնաբուժի գալն:

բ) Հետաքննություն է կատարում, թե առաջին անգամ վոր տնտեսության մեջ կամ բակում յերևաց հիվանդությունը, յերևալու ժամանակն ու մուտք գործելու միջոցը. տեղեկություններ է հավաքում, թե հիվանդության նշաններ հայտնաբերելուց հետո վարակված բակից յերբ և ում ծախված կամ ուր է քչված տավարը և արտահանված են արդյոք սատկած անասուններից հանած կաշիները և թե հիվանդ անասունները չեն շվվել ուրիշ տնտեսությունների կամ գյուղերի անասունների հետ:

Յեթե հետաքննությունից պարզվեց, վոր ժանտախտի վարակը տվյալ շրջանից դուրս է գնացել, ապա Հանձնաժողովը այդ մասին անմիջապես հայտնում է համապատասխան իշխանությանն ու անասնաբուժական հսկողությանը:

21. Ստացած տվյալների համեմատ Հանձնաժողովը վորոշում է, թե ժանտախտով վտանգված վայրի (առանձին տնտեսություն, գյուղ կամ արոտատեղ) և թե ժանտախտի շրջանի սահմանները. այսինքն

ժանտախտից սպառնացող այն տեղերի սահմանները, վորի ազդաբնակչու-  
թյունը տնտեսական պայմանների բերումով, առևտրական ու տնտեսական  
սերտ կապ ունի ժանտախտի վայրի հետ. և ժանտախտի կետի ու շրջանի  
բացման մասին շտապ կարգով հայտնում է Գավգործկոմի Անասնաբուժա-  
կան Յենթարածին վերջինիս կողմից գավառի բոլոր գյուղերին և հարևան  
Գավգործկոմներին հայտնելու և համապատասխան պարտադիր վորոշումներ  
հրատարակելու նպատակով:

Հանձնաժողովն իր կողմից ձեռք է առնում բոլոր միջոցները տեղական  
իշխանության, միլիցիայի և գյուղական հասարակական կազմակերպու-  
թյունների միջոցով ժանտախտի կետի ու շրջանի ազդաբնակչու-  
թյանը լայնորեն ծանոթացնելու ժանտախտի ելու-  
թյան ու նրա դեմ պայքարելու մի-  
ջոցներին:

Այնուհետև հակաժանտախտային Գործադիր Հանձնաժողովը ձեռնար-  
կում է՝

- ա) Վարակման ծավալումը կանխող, և
- բ) Վտանգված կետում նրա շուտափուլի դադարեցման միջոցներ սահ-  
մանելուն ու կիրառելուն:

**Ա. ԺԱՆՏԱԽՏԻ ԾԱՎԱԼՈՒՄԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ**

22. Ժանտախտի ծավալումը կանխելու միջոցները գործադրվում են  
համաձայն Անաս. Որենսդրելի 14-րդ հոդվածի. այն է՝

ա) Հանձնաժողովը վտանգված կետում ըստ ծխերի ցուցակագրում է  
տավարը և համաճարակի գոյության ամբողջ ընթացքում նրանց վրա սահ-  
մանում անասնաբուժական հսկողութիւն: Ըստ վորում յեթե անհնար է  
պարզել անասունների վորեւե խմբի տերերին կամ նրանց փոխարինողներին և  
դրա հետևանքով անկարելի յե դառնում անասնաբուժական հսկողութիւն  
սահմանելն ու հակաժանտախտային միջոցներ կիրառելը, այդ դեպքում նման  
անասունները, մինչև իսկական տերերի հայտնվելը, հանձնվում են տեղա-  
կան իշխանության խնամքին և այդ ժամանակամիջոցում նրանց վրա արած  
ծախսերը կատարվում են ի հաշիվ անասնատերերի կամ նրանց փոխարինող-  
ների:

բ) Հսկում է, վորպեսզի ստակած և սպանված անասունների դիակները  
թաղվեն անասունների համար հատկաժամ հատուկ գերեզմանոցում:

գ) Արգելում է ժանտախտի կետում առանց անասնաբուժական նախնա-  
կան ըննության իբրև մտացու մորթել անասուններին և կաշիները հանել դի-  
ակներից:

դ) Արգելում է մինչև համաճարակի դադարելը ժանտախտի կետից տա-  
վարը քչել ուրիշ գյուղեր: Միայն ծայրահեղ բացառիկ դեպքերում, ինչպես  
որինակ վտանգված վայրում կեր և ջուր չլինելիս, Հանձնաժողովի ցուց-

մունքներով և միլիցիոներների, անասնաբուժի կամ անասնաբուժակի և  
Հանձնաժողովների անդամների ուղեկցությամբ, անասունները կարող են  
քչվել կետից վորեւե մտակա մեկուսացրած տեղ, այնպիսի ճանապարհներով,  
վորտեղ անասունները չեն կարող չփվել ժանտախտից անվտանգ գյուղերի  
տնասունների հետ:

յե) Արգելում է առանց հանձնաժողովի թույլտվության ժանտախտի  
կետից դուրս տանել հում կաշի, միս, բուրդ, սմբակներ, աղբ, խոտ և այլ  
կերեր:

զ) Արգելում է տավարը անցկացնել ժանտախտի կետով և առհասարակ  
կարանտինի յենթարկված տեղերով:

Ծանոթություն. — Ծայրահեղ բացառիկ դեպքերում Հանձնաժողովին  
իրավունք է տրվում տավարները քչել ժանտախտի կետը անմիջապես  
մորթելու կամ պատվաստելու համար:

և) Վորոշում է կայացնում կարանտինի ամբողջ ընթացքում փակելու  
ժանտախտի կետում և նրա շրջանում յեղած անասունների շուկաները, տո-  
նավաճառանոցները, ցուցահանդեսները. կամ համաձայն հատուկ հրահանգ-  
ների սահմանափակվում է այդ տեղերը բերվող կենդանիների վորոշ տեսակ-  
ները, վորոնք տավարի ժանտախտի նկատմամբ վարկամբո են:

Այդ վորոշման մասին Հանձնաժողովը հայտնում է Գավգործկոմին հա-  
մապատասխան պարտադիր վորոշումներ հրատարակելու համար:

ը) Յեթե վարակված գյուղերը գտնվում է խճուղու վրա, Հանձնաժո-  
ղովը վորոշում է կայացնում տավարի յեթեկու-  
թյան համար նրա մի մա-  
սը փակել, ցույց է տալիս շրջուղին, յեթե այդպիսին կարելի յե հատկացնել,  
և անմիջապես հայտնում է Գավգործկոմին:

Ամբողջ գավառի համար տնտեսական մեծ նշանակութիւն ունեցող ճա-  
նապարհների փակումը կատարվում է Գավգործկոմի վորոշումով, ըստ  
Հանձնաժողովի առաջադրության:

Մի քանի գավառների տնտեսական տեսակետից կարևոր կենտրոններ  
իրար միացնող ճանապարհները փակվում են Հողտողկոմատի կարգադրու-  
թյամբ:

թ) Քաղաքներում կամ մեծ գյուղերում ժանտախտի համաճարակ լինե-  
լիս, սահմանափակիչ միջոցների կիրառումը նայած հիվանդության տարած-  
ման աստիճանին, տվյալ ժամանակին և անասունները պահելու պայմաննե-  
րին, կարող են սահմանվել միմիայն վարակված թաղամասերում:

ժ) Ժանտախտի շրջանում, մինչև նրա անվտանգ լինել ապրղելը, Հանձ-  
նաժողովը կարանտինային միջոցները կիրառում է կամ լիովին, կամ թե  
միայն արգելում է տավարի վաճառքն ու ուրիշ գյուղեր քչելը:

Բացի դրանից ժանտախտի շրջանում Հանձնաժողովը կիրառում է 22-րդ  
հոդվածով նախատեսված Ա, Գ և Ե կետերը:

ի) Այս հոգովածում հիշված կարանտինայի միջոցները կիրառելու համար, Հանձնաժողովը վորոշում է պահակատեղերի թիվն ու տեղը, սահմանում չըջուղիներ և անհրաժեշտութեան դեպքում, ազգաբնակչութեան կողմից կարանտինային միջոցների հսկողութեանը ուժեղացնելու նպատակով հրավիրում է պահանջված թվով միլիցիոներներ:

23. Հանձնաժողովի սահմանած կարանտինային միջոցները կիրառվում են տեղական, չըջանային և դավառային վարչակա՞ մարմինների կողմից, Հակաժանտախտային Հանձնաժողովի և Գավառործկոմի հսկողութեան տակ:

**Բ. ՎՏԱՆԳՎԱԾ ԿԵՏՈՒՄ ԺԱՆՏԱԿՏԻ ՇՈՒՍԱՓՈՒՅԹ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ.**

24. Տավարի հակաժանտախտային պատվաստումների պարտադիր կիրառումը (ստիպողական և նախազգուշական-բուժական) սահմանվում է ըստ տեղական պայմանների, հիվանդութեան տարածման աստիճանի կամ անասունները պահելու պայմանների:

Ժանտախտի դեմ պայքարի այդ միջոցները իրագործելու համար Հակաժանտախտային Հանձնաժողովը՝

ա) Վորոշում է կայացնում, ըստ անասնաբուժի ցուցմունքների, վերջինի տիրոջից հիվանդ անասունին՝ պատվաստումների համար անհրաժեշտ ժահրային արյուն ստանալու նպատակով և դնահատում է անասունը:

բ) Տեղական իշխանութեան և անասնաբուժա-սանիտարական հոգատարութեան անդամների հետ, և ազգաբնակչութեան աջակցութեամբ ստեղծում է պատվաստումների համար անհրաժեշտ պայմաններ. այն է՝ ընտրում է պատվաստումներ կատարելու համար հատկապես մեկ առանձին հարմար տեղ, հոգում է անասունները կապելու հարմարութեանը ստեղծելուն, անասունները պատվաստելու ժամանակ կապելու համար թոկեր պատրաստելուն, անհրաժեշտ թվով բանվորներ հրավիրելուն, վառելանյութ, կաթսաներ, ամաններ և պատվաստելու ժամանակ պահանջվելիք այլ իրեր պատրաստելուն:

Ծանոթութեան. — Պատվաստումների ժամանակ պահանջվելիք անհրաժեշտ իրերը, անասնաբուժական պերսոնալին ոգնելու և դերիդմաններ փորելու, ինչպես նաև կարանտինային պահակատեղերում պահակութեան անելու համար, պահանջվելիք բանվորները տրվում են ժանտախտի կետի ազգաբնակչութեան կողմից ձրիաբար, վորպեսի նպատակի համար իրավունք է վերապահվում համապատասխան Գավառործկոմներին, ըստ Հակաժանտախտային Գործադիր Հանձնաժողովի առաջադրութեան, ազգաբնակչութեանը յենթարկել աշխատանքային պահակի:

Քաղաքներում այդ ծախսերը կատարում է Կոմսունալ Տընտեսութեանը:

Գավառահային պահեստներից շիճուկն ու լաբորատորիական պիտույքները ժանտախտի կետն են փոխադրվում Գավ. և Շըջգործկոմների պատասխանատվութեան տակ և տեղական միջոցների հաշվին:

25. Յերբ հանձնաժողովը կհամոզվի, վոր վարակը չտարածելու համար բոլոր կարանտինային միջոցները ձեռք են առնվում և պատվաստումների համար բոլոր անհրաժեշտ պատրաստութեաններն ավարտված են, Հանձնաժողովի անասնաբուժը, կամ նրա հսկողութեան տակ մյուս անասնաբուժները ձեռնարկում են պատվաստումներ, համաձայն Հողժողկոմատի Անասնաբուժական վարչութեան հրահանգների:

26. Մինչև վայրը ժանտախտից անվտանգ հայտարարելը, պատվաստված անասունները մնում են անասնաբուժական հսկողութեան տակ:

27. Յեթե ինչ-ինչ պատճառներով անհար է ժանտախտի վայրում պատվաստումներ կատարել (շիճուկ չունենալը և այլն) Հանձնաժողովը վարակված տնտեսութեանների նկատմամբ վորոշում է կիրառել մեկուսացման և առհասարակ անասնաբուժա-սանիտարական միջոցներ, անկախ ամբողջ վայրի կարանտինայից. իսկ յերբ հիվանդ անասունների նկատմամբ անհար է լինում կիրառել այդ միջոցները, Հանձնաժողովին իրավունք է վերապահվում սպանել այդպիսիներին:

**Ա.ԿՏԱ.ՀԱՆՈՒՄ.**

28. Հիվանդ անասունների դոմերը կամ նրանց մնալու և այլ տեղերը, ինչպես նաև կերակրման պարագաներն ու այլ իրերը, վորոնք չիժան ժեջ են յեղել հիվանդ անասունների հետ, անասնաբուժի ցուցմունքներով ախտահանման են յենթարկվում համաձայն հրահանգների:

**ԿԱՐԱՆՏԻՆԱՅԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ.**

29. Այն բնակավայրերն ու նախիրները, վորտեղ ժանտախտի համաճարակը դադարեցնելու համար պատվաստումները կատարված են կոմբինացիոն մեթոդով, Հակաժանտախտային Գործադիր Հանձնաժողովի կողմից անվտանգ են հայտարարվում և վերացվում են բոլոր կարանտինային միջոցները, ժանտախտով հիվանդ անասունի առողջանալու կամ սատկելու վերջին դեպքից 14 որ անցնելուց հետո:

Իսկ այն բնակավայրերն ու նախիրները, վորտեղ պատվաստումները կատարված են միմիայն շիճուկով (առանց արյունի) կամ թե ժանտախտը դադարեցված է հիվանդ անասուններին սպանելով կամ միմիայն կարանտինային ու անասնաբուժա-սանիտարական միջոցների գործադրումով, ժանտախտից անվտանգ են հայտարարվում հիվանդ անասունի առողջանալու, սպանելու կամ սատկելու վերջին դեպքերից 21 որ անցնելուց հետո:

Կարանտինը վերացնելու համար Հանձնաժողովը հատուկ վորոշում է կայացնում և հայտնում Գավառնախարուժի միջոցով Հողժողովոմատի Անասնաբուժական Վարչությանը և համապատասխան Գավառործկոմին:

Ծանոթություն.— Բացառիկ դեպքերում, պետական կարևոր նկատառումներով, սահմանափակիչ կարանտինային միջոցները առանձին տնտեսութունների և անասունների առանձին խմբերի նկատմամբ, կարող են փոխվել Հողժողովոմատի կողմից, նախ քան ցույց տված ժամկետի լրանալը և այդպիսի անասունների շարժությունները կարող է թուլատրվել յուրաքանչյուր առանձին դեպքի համար Հողժողովոմատի կողմից սահմանած հատուկ կարգով:

30. Առևտրաարդյունաբերական բնույթ ունեցող նախիրի մեջ տավարի ժանտախտ հայտնաբերելիս ժանտախտով հիվանդ և կասկածելի անասունները, սպանվում են հենց տեղում և դիակները թաղվում, պահպանելով Անասնաբուժ. Որենսդրքի պահանջած կանոնները: Մնացած անասունները ուղղվում են մոտակա յերկաթուղու կայարանը անմիջապես մորթելու նպատակով սպանդանոց փոխադրվելու համար:

31. Յեթե նախորդ հոդվածում ցույց տված անասուններին կարելի չէ մեկուսացնել, նրանց նկատմամբ կիրառվում են հակաժանտախտային պատվաստումներ, կամ կարանտինային ու անասնաբուժա-սանիտարական միջոցներ, համաձայն տեղական տնտեսութունների համար դործադրված հակաժանտախտային ձեռնարկումների կանոնների:

**ԺԱՆՏԱԽՏԻ ԴԵՄ ՊԱԵՔԱՐԻ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՊԱՆՎԱԾ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՏԵՐԵՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ.**

32. Հիվանդության բնույթը վորոշելու, նաև պատվաստումների համար ժահրային այրուն ստանալու նպատակով սպանված անասունների տերերին, տրվում է դրամական վարձատրություն չուկայի արժեքի չափով, ըստ Հանձնաժողովի գնահատության, բայց վոչ բարձր Հողժողովոմատի կողմից սահմանված վերջնական գներից:

Համաճարակի շուտափուլից դադարեցման նպատակով սպանված ժանտախտով հիվանդ և կասկածելի անասունների համար, վարձատրություն տրվում է Հանձնաժողովի կատարած գնահատության <sup>3</sup>/<sub>4</sub> չափով, ընդ վորում գնահատությունը բարձր չպետք է լինի Հողժողովոմատի սահմանած վերջնական գներից:

33. Հանձնաժողովի վորոշմամբ սպանած անասունների համար տրվելիք գումարները հանձնվում են անմիջականորեն հենց իրենց անասնատերերին և չեն կարող պահվել հարկեր, տուրքեր, ապառիկներ և մասնավոր գանձումներ հանգցնելու համար:

34. Վարձատրություն չի տրվում այն անասնատերերին կամ նրանց փո-

խարինողներին, վորոնք դատարանով ճանաչվում են իբրև Անաս. Որենսդրք խախտողներ:

Ծանոթություն.— Գնահատությունը կատարվում է անկախ նրանից, թե վարձատրությունը վճարվելու չէ թե վոչ:

**ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓՈՂ ԱՆԱՍՆԱՏԵՐԵՐԻ ԿԱՄ ՆԸՐԱՆՑ ՓՈՒՍՐԻՆՈՂՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ.**

35. Այն անասնատերերը կամ նրանց փոխարինողները, վորոնք դիտավորյալ կամ անփութության հետևանքով իր ժամանակին չեն հայտնել ում հարկն է անասունների հիվանդության յերևան դալու մասին, կամ հիվանդությունը պարզելուց հետո չեն կատարել սույն կանոնադրությամբ սահմանված միջոցները, ինչպես նաև իշխանության կողմից սույն կանոնների դործադրման ընդդիմացողները, յենթարկվում են պատասխանատվության համաձայն Քր. Որ. 216, 219-ա և 86 հոդ. հոդ.:

36. Հանձնաժողովի սահմանած կարանտինային միջոցները խախտողները յենթարկվում են պատասխանատվության համաձայն Քր. Որ. 219 հոդ.:

✓ Ի. տ. Հողժողովոմ. ՄԻՐՉԱԽԱՆՑԱՆ

✓ Ներքաբժոժողովոմ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

✓ Արտժողովոմ. ԱՇՐԱՅՅԱՆ

✓ Անասնաբուժվարչության պետ՝ ԹՈՐՈՍՅԱՆ

ՀԱՅՊՈՒԻԳՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրառ. 325 բ. պատվ. 4543 տիրաժ 1500

Faint, illegible text at the top of the page, possibly bleed-through from the reverse side.

Second line of faint, illegible text.

Third line of faint, illegible text.

Fourth line of faint, illegible text.

Fifth line of faint, illegible text.

Sixth line of faint, illegible text.

Seventh line of faint, illegible text.

Eighth line of faint, illegible text.

Ninth line of faint, illegible text.

Tenth line of faint, illegible text.

Eleventh line of faint, illegible text.

Twelfth line of faint, illegible text.

Thirteenth line of faint, illegible text.

Fourteenth line of faint, illegible text.



« Ազգային գրադարան



NL0276068

8989